

«Կարող եմ օգտվել այլ ծառայություններից»:

Իրավապաշտպան ծառայությունները, հնարավոր է, կարողանա օգնել Ձեզ: Իրավապաշտպանը կարող է.

- տրամադրել տեղեկություններ Ձեր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ
- օգնել Ձեզ բարձրացնել մեր կամ ծառայություն մատուցող կազմակերպության վերաբերյալ Ձեր խնդիրները
- աջակցել Ձեզ բողոքների գործընթացի ցանկացած փուլում:

Իրավապաշտպան ծառայությունն ազատ է, անկախ և գաղտնի: Նախքան որևէ գործողություն ձեռնարկելը, իրավապաշտպանը մշտապես կհայցի Ձեր թույլտվությունը:

Դուք կարող եք զանգահարել National Aged Care Advocacy Line-ին հետևյալ հեռախոսահամարով՝ **1800 700 600:**

Ձեր թույլտվությամբ մենք կարող ենք զանգահարել իրավապաշտպան գործակալության Ձեր անունից՝ բացատրելու Ձեր մտահոգությունները և ձեռք բերելու պայմանավորվածություն, որպեսզի գործակալությունը կապ հաստատի Ձեզ հետ:



Լրացուցիչ տեղեկություններ

Եթե Դուք խուլ եք, կամ ունեք լսողության կամ խոսքի խանգարում, զանգահարեք **1800 555 677** (Ազգային փոխանցման ծառայություն) և խնդրեք **1800 951 822:**

Եթե Ձեզ անհրաժեշտ է թարգմանիչ, զանգահարեք **131 450** (Գրավոր և բանավոր թարգմանչական ծառայություն) և խնդրեք **1800 951 822:**

Առավել մանրամասն տեղեկություններ տարեց մարդկանց խնամքի մասին

My Aged Care կայքը և ազգային կոնտակտային կենտրոնը ստեղծվել են Ավստրալիայի կառավարության կողմից՝ օգնելու Ձեզ օգտվել տարեց մարդկանց խնամքի համակարգից: Նրանց միջոցով Դուք կարող եմ տեղեկություններ ստանալ տարեց մարդկանց խնամքի մասին Ձեր, Ձեր ընտանիքի անդամի, ընկերոջ կամ ցանկացած այլ անձի համար, որի մասին Դուք հոգ եք տանում:

My Aged Care

Հ: 1800 200 422

Կ: myagedcare.gov.au



Հեռ.՝

1800 951 822



Կայք՝

agedcarequality.gov.au



Գրեք մեզ՝

Aged Care Quality and Safety Commission
GPO Box 9819, Ձեր մայրաքաղաքը

Armenian



Australian Government

Aged Care Quality and Safety Commission

Engage
Empower
Safeguard



Որևէ մտահոգություն ունե՞ք:

Տարեց մարդկանց խնամքի որակի եւ անվտանգության հանձնաժողովի մասին տեղեկատվություն տարեց մարդկանց խնամքի ծառայությունների սպառողների, նրանց ընտանիքների, խնամակալների և ներկայացուցիչների համար

1800 951 822
agedcarequality.gov.au

«Ինչպես կարող է Տարեց մարդկանց խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովը օգնել ինձ»:

Մենք կարող ենք աջակցել, եթե դուք մտահագություններ ունեք Ավստրալիայի կառավարության կողմից ֆինանսավորվող տարեց մարդկանց խնամքի ծառայություններ մատուցողների կողմից տրամադրվող խնամքի կամ ծառայությունների որակի վերաբերյալ: Դուք կարող եք նաև արտահայտել Ձեր գնահատականը խնամքի մասին՝ օգնելու մեզ, երբ մենք ստուգում ենք ծառայությունը՝ ելնելով որակի չափանիշներից:

Դուք կարող եք բարձրացնել խնդիրներ և գնահատական տրամադրել ծերերի խնամքի ծառայությունների մասին, որոնք Դուք ստանում եք տարեց մարդկանց խնամքի կենտրոնում կամ Ձեր տանը, ներառյալ՝

- Կացարանային կամ ժամանակավոր կացարանային խնամք
- Տնային խնամքի փաթեթներ
- Համագործակցության տնային աջակցության ծրագիր
- Ճկուն խնամք, այդ թվում Transition Care, և National Aboriginal and Torres Strait Islander Flexible Aged Care Program:

Ձեր մտահագությունները կամ գնահատականը կարող են վերաբերել Ձեզ տրամադրված ցանկացած խնամքին կամ ծառայություններին, ներառյալ անձնական կամ կլինիկական խնամքը, զբաղմունքի ընտրությունը, խտրականությունը, սննդակարգը, հաղորդակցությունը կամ ֆիզիկական միջավայրը:



«Ո՞վ կարող է բարձրաձայնել մտահագությունն»:

Յուրաքանչյուր ոք կարող է բարձրաձայնել մտահագություն: Մենք խրախուսում ենք նախ բարձրաձայնել Ձեր խնդիրը ծառայության մատուցողի հետ:

Այս մարդկանց թվին պատկանում են տարեց մարդկանց խնամքի կենտրոնները, գործընկերները, ընտանիքը, ներկայացուցիչները, ընկերները, իրավապաշտպանները, աշխատակիցները և կամավորները:

Եթե Դուք բարձրացնում եք խնդիր տարեց մարդկանց խնամքի մասին, որը ստանում է մեկ այլ անձնավորությունը, ապա պետք է ապահովվեք, որ տվյալ մարդը (կամ նրա ներկայացուցիչը) տեղյակ լինի այդ մասին:

Եթե Դուք չեք կարող լուծել Ձեր խնդիրը ծառայություն մատուցողի հետ, ապա կարող եք կապ հաստատել Տարեց մարդկանց խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովի հետ՝ **1800 951 822**: Բողոքարկման մեր ծառայությունն անվճար է:

Մենք կքննարկենք մտահագություններն անկախ անձի մշակութային պատկանելիության, հաշմանդամության, գենդերի, սեռային և գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման կամ որևէ այլ կարգավիճակի:



«Ի՞նչ է տեղի կունենա, եթե կապ հաստատեմ Տարեց մարդկանց խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովի հետ»:

Մենք կբացատրենք գործընթացը, լուծման հասանելի տարբերակները և ինչ կարելի է նվաճել:

Մեր խնդիրն է լուծել Ձեր մտահագությունը՝ տարեց մարդկանց խնամք ստացող անձի լավագույն շահին համապատասխան:

Խնդրում ենք տրամադրել հնարավորինս շատ տեղեկատվություն մեզ հետ կապ հաստատելիս: Սա կօգնի մեզ հասկանալ Ձեր խնդիրները և ակնկալիքները:

Մենք կընտրենք այն տարբերակները, որոնք ամենահավանական կերպով հնարավորություն կստեղծեն ձեռք բերել լավագույն արդյունք՝ հիմք ընդունելով Ձեր մտահագության բնույթը և խնամքի տակ գտնվող անձի համար ռիսկայնությունը:

Որոշ դեպքերում մենք կարող ենք խնդրել ծառայություն մատուցողին լուծել Ձեր խնդիրը: Մենք կարող ենք նաև օգտագործել այլ տարբերակներ, ինչպիսիք են հաշտեցումը, միջնորդությունը կամ հետաքննությունը:

«Արդյո՞ք պետք է տրամադրեմ իմ անունը»:

Ոչ: Դուք կարող եք ներկայացնել Ձեր բողոքն անանուն կամ գաղտնի:

Այնուամենայնիվ, նման իրավիճակը կարող է սահմանափակել այն հնարավորը, որ մենք կարող ենք անել Ձեզ համար, ուստի լավագույնն է Ձեր մտահագությունը ներկայացնել հրապարակայնորեն:

Մենք կարող ենք բացատրել տարբերությունը բաց, անանուն և գաղտնի բողոքների միջև, երբ Դուք գանգահարեք: Այս մասին կարելի է տեղեկություն գտնել նաև մեր կայքում՝ agedcarequality.gov.au